Վահան Տերյան

Որպես Լայերտի որդին

Որպես Լայերսրի որդին, որպես
ՈՒլիս մի, թողած և հող և տուն,
Անցա ծորվեր ու ցամաքներ ես
Ամեն տեղ օտար և անխնդում:

ՈՒ հոգնած քայլով ահա կրկին
Վերադարձնում եմ հայրենի հող,
Դեպի քարերրդ ազնիվ ու հին,
Եվ խրճիթներրդ ահով նիրհող:

Նվագով անուշ քանի սիրեն
Կանչում էին ինձ և կախարդում,
Բայց սիրտրս մաքուր, որպես ցորեն,
Պահեց անունրդ վշտում արթուն:

Ցուրտ հեռուներում, անլռելի
Կրկեսների մեջ սրտով մոլոր
Երազում էի քո սիրելի
Եվ մեղմ երգերը, որպես օրոր:

ՈՒ կարոտակեզ ահա կրկին
Վերադարձնում եմ, որ առհավետ
ՈՒնկնդիր լինեմ քո հին երգին

Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ. . .